# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<13>> հուլիսի 2020թ.   N ՄՈ/267-2020

ք. Արմավիր

### << ՋՐԱՌԱՏԻ Թ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Դավիթ Հարությունյանի 2020 թվականի հուլիսի 10-ի դիմումը.

ո ր ո շ ու մ   ե մ

1. <<Ջրառատի Թ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Դավիթ Հարությունյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2020 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 17-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Դավիթ Հարությունյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Ջրառատի Թ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Ջրառատի Թ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Ժիրայր Վարդանյանին:
3. Դավիթ Հարությունյանին աշխատանքի մեջ համարել 2020 թվական օգոստոսի 18-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝    Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 13.07.2020 13:26:48 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230